



ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ԸՆԴԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ

Հասցե՝ ք.Երևան Աղոնցի 17/2 շենք, բն.45, հեռ. 055-23-76-12, 091-521-511, էլ. հասցե՝ pepanyanarmen100@rambler.ru

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արարատի մարզի Ոսկետափ համայնքի Հ.Աբելյան փողոց թիվ 5 հասցեում գտնվող մանկապարտեզի մասնաշենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ

Ձննումը կատարվել է համաձայն Ոսկետափի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հետ 15.03.2021թ. կնքված թիվ 10 պայմանագրի:

Մանկապարտեզը բաղկացած է հիմնական ուսումնական մասնաշենքից, կից իրականացված և միջանցքի միջոցով դրան կապվող օժանդակ շինություններից /խոհանոց, կաթսայատուն, լվացքատուն և այլն/ ինչպես նաև վերջերս կառուցված դահլիճային մասնաշենքից (սեփ. վկայական թիվ 2591625 տրված 08.04.2009թ.):

Մանկապարտեզի հիմնական մասնաշենքն իրենցից ներկայացնում է 25.5x34.5մ եզրաչափերի բարդ հատակագծով և 1-2 վերգետնյա հարկերով կառույցների համալիր որի տեսքը բերված է նկ.1-4-ում, իսկ նորակառույց դահլիճային մասնաշենքն իրենցից ներկայացնում է 14.8x15.8մ եզրաչափերով, բարդ հատակագծով կառույց, որի տեսքը բերված է նկ. 5-6-ում:

Հիմնական մասնաշենքն կառուցվել են 1970-ական թվականների վերջերին, իսկ դահլիճային մասնաշենքը 2019-2020 թվականներին: Մասնաշենքերը միմյանցից անջատված են դեֆորմացիոն կարաններով:

Հիմնական մասնաշենքի կոնստրուկտիվ համակարգը լուծված է երկայնական կրող պատերով, լայնական ինքնակրող պատերով և միջհարկային ծածկերով: Նշենք, որ մասնաշենքի աջ և ձախ կողմերում ի սկզբանե իրականացված են եղել միաձույլ երկաթբետոնե կարկասային համակարգով բաց պատշգամբներ, որոնք հետագայում փակվել են, այսինքն շարվել են պատեր և ներկայումս այդ տարածքները օգտագործվում են որպես մանկապարտեզի խմբեր:

Դահլիճային մասնաշենքի կոնստրուկտիվ համակարգը լուծված է միաձույլ երկաթբետոնե կարկասի և վերնածածկի տեսքով:

Մասնաշենքերի կրող և ինքնակրող տարրերն ունեն հետևյալ կոնստրուկտիվ լուծումները:

Քարե կրող պատերի և պատշգամբների կարկասի հիմքերը ժապավենային են, իրականացված հիմնականում երկաթբետոնից, որոշ օժանդակ շինությունների հիմքեր իրականացված են խամբարաբետոնից:

Դահլիճային մասնաշենքի հիմքերը ժապավենային են խաչահատվող հեծանների տեսքով, իրականացված են միաձույլ երկաթբետոնից և ունեն 50x60սմ չափեր:

Հիմնական մասնաշենքի պատերի գետնախարսխային հատվածը գլխավոր ճակատի կողմից իրականացված է բազալտաքարերի «քուրքատաշ» երեսաշարով շարվածքից:

Հիմնական մասնաշենքի պատերն իրականացված են «միդիս» տիպի շարվածքից ունեն 50-55սմ հաստություն, գլխավոր ճակատի կողմից ունեն «սրբատաշ» երեսաշար, կողաճակատներից սվաղված են ցեմենտ-ավազե շաղախով: Հիմնական մասնաշենքի պատշգամբային և օժանդակ շինությունների որոշ հատվածներում, ինչպես նաև դահլիճային մասնաշենքում պատերն իրականացված են կանոնավոր ձևի տուֆաքարերի շարվածքից:

Դահլիճային հատվածի շրջանակների սյուների լայնական հատվածքները կազմում են 40x40սմ և 40x90սմ, իսկ պարզունակներինը 40x40սմ և 40x50սմ:

Միջհարկային ծածկերն ու վերնածածկը հիմնական մասնաշենքում իրականացված է հավաքովի երկաթբետոնե բազմանց սալերի տեսքով, իսկ դահլիճային մասնաշենքում միաձույլ երկաթբետոնե 15սմ հաստությամբ հոծ սալի տեսքով:


Միջնորմներն իրականացված են պեմզաբետոնե 60սմ հաստությամբ սալերի և մասամբ պեմզաբետոնե 200սմ հաստությամբ բլոկների շարվածքով:

Հիմնական մասնաշենքն կենտրոնական հատվածում ունի մետաղական սանդղափեծաններով, հատավոր աստիճաններով և միաձույլ երկաթբետոնե հարթակներով աստիճանավանդակ:

Մասնաշենքերի տանիքները լանջավոր են փայտե ծալեղնային համակարգով, ցինկապատ պրոֆիլացված ծածկույթով, արտաքին կազմակերպված ջրահեռացման համակարգով:

Ձևնմանք պարզվեց հետևյալը:

Բազմամյա շահագործման, մթնոլորտային տեղումների, ինչպես նաև 13.02.2021թ. տեղի ունեցած երկրաշարժի ազդեցությունից հիմնական մասնաշենքի կրող և ինքնակրող տարրերը ստացել են մի շարք վնասվածքներ:




სს.1




სს.2




სს.3



სს.4



სს.5



სს.6

Առավելագույն վնասվածքները առկա են հիմնական մասնաշենքի և նախկին բաց պատշգամբային հատվածի պատերի և ծածկերի հատման /կցորդման/ տեղամասերում: Այսպես այդ տեղամասերում 1-ին և 2-րդ հարկերում առկա են բազմաթիվ ճաքեր և կոռոզիոն օջախներ, այդ ճաքերի առավելագույն բացվածքը հասնում 20մմ-ի նկ.7-10:

Նստվածքային բնույթի թեք ճաքեր են առկա հիմնական մասնաշենքի եզրային լայնական /որոնք կից են պատշգամբային հատվածին/ պատերի վրա, ճաքերի բացվածքի առավելագույն չափը հասնում է 35-40մմ-ի նկ.11-14, նշենք, որ այդ պատերը 1-ին հարկի այդ հատվածում հանդիսանում են կրող, քանի որ ծածկի պանելները հենվում են այդ պատի վրա:

Կոռոզիոն օջախներ են առկա նաև վերնածածկի սալերի վրա, ինչպես նաև ճաքեր դրանց երկայնքով կցորդման տեղամասերում նկ.15-17:

Բազմաթիվ նստվածքային բնույթի ճաքեր են առկա մասնաշենքի միջնորմների վրա, ինչպես նաև հատակներում նկ.18-21:

Տանիքի ծալեղներն ու տանիքածածկույթը գտնվում են լավ վիճակում, քանի որ վերջերս են վերանորոգվել:

Մասնաշենքի շուրջ իրականացված պաշտպանիչ սալվածքը ունի բազմաթիվ վնասվածքներ, առկա են բազմաթիվ աճած ծառեր և բուսականություն նկ.22:

Զննված հիմնական մասնաշենքի ֆիզիկական մաշվածության որոշման արդյունքները բերված են թիվ 1 աղյուսակում:

Աղյուսակ 1

N/N ըստ հերթակ:	Շենքի տարրերի անվանումը	Տարրի հաշվային տեսակարար կշիռը՝ II _{ii}	Տարրի ֆիզիկական մաշվածութ. Փ _փ , %	Տարրի ֆիզիկական մաշվածության բա- ժինը շենքի ամբողջ ֆիզ. մաշվածության մեջ: Փ _փ . II _{ii} , %
1	Յիմքեր	0.07	32	2.24
2	Պատեր	0.25	42	10.5
3	Պատշգամբների սյուներ և պարզունակներ	0.05	30	1.5
4	Միջնորմներ	0.06	60	3.6
5	Ծածկեր	0.12	32	3.84
6	Տանիք	0.04	15	0.6
7	Տանիքածածկ	0.025	15	0.375
8	Հատակներ	0.09	45	4.05
9	Պատուհաններ	0.1	30	3
10	Ղռներ	0.035	46	1.61

11	Հարդարման ծածկույթ	0.05	51	2.55
	Ներքին տեխնիկական սարքավորումներ, այդ թվում՝			
	ջեռուցում	0.03	15	0.45
	սառը ջրամատակարարում	0.015	20	0.3
	կոյուղի	0.02	30	0.6
12	էլեկտրամատակարարում	0.015	20	0.3
	Այլ տարրեր			
	սանդղուղքներ	0.01	25	0.25
	մնացածը	0.02	20	0.4


$$\Phi_{\text{մասն}} = \sum_{i=1}^{12} \Phi_i \cdot l_i = 36.16\%$$

Կլորացնելով ստացված արդյունքը 1%-ի ճշտությամբ, մասնաշենքերի ֆիզիկական մաշվածությունը կազմում է 36%:


Ձևնված հիմնական մասնաշենքի տեխնիկական վիճակը ընդհանուր առմամբ գնահատվում է բավարար /կոնստրուկտիվ տարրերը ընդհանրապես պիտանի են շահագործման համար, բայց պահանջում են որոշ կապիտալ նորոգում, որն ամենաանհրաժեշտն է տվյալ պահին /, իսկ վնասվածությունը ըստ գործող նորմերի (ՀՀՇՆ 20.04- «Երկրաշարժադիմացկուն շինարարություն:Նախագծման նորմեր» և «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության և վկայագրավորման (անձնագրավորման) մեթոդական ցուցումներ») սանդղակների դասվում է 3-րդ աստիճանի /կոնստրուկցիաների զգալի վնասվածքներ/:




Նկ.7




Նկ.8




Նկ.9




Նկ.10



Նկ.11




Նկ.12



Նկ.13



Նկ.14




ԱԿ.15



ԱԿ.16




ԱԿ.17




ԱԿ.18




Նկ.19



Նկ.20



Նկ.21



Նկ.22

Համաձայն ներկայումս գործող ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում, հիմնական դրույթներ» նորմի ուսումնական հաստատությունների համար վերակառուցման նվազագույն թույլարելի մակարդակն ընդունվում է «Սեյսմազինվածության ավելացում»:

Ձեռնված մասնաշենքի բնականոն (նորմալ) շահագործման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ տեխնիկական միջոցառումները.

1. Համաձայն գործող նորմերի (ՀՀՇՆ 20.04-«Երկրաշարժադիմացկուն շինարարություն: Նախագծման նորմեր») ծածկերի ու վերնածածկերի

կոշտությունը հորիզոնական հարթության մեջ պետք է ապահովել դրանց միաձուլմամբ: Սակայն տվյալ դեպքում այդպիսի լուծում կիրառված չէ, ուստի համաձայն գործող նորմերի անհրաժեշտ է մասնաշենքի միջհարկային ծածկերի և վերնածածկի մակարդակում ստեղծել հորիզոնական կոշտ սկավառակներ: Շենքի վերնածածկի սալերի հորիզոնական կոշտությունն բարձրացնելու և դրանց համատեղ աշխատանքը ապահովելու նպատակով առաջարկվում է իրականացնել երկաթբետոնե վրաշերտ: Երկաթբետոնե վրաշերտն իրականացնել առաջնորդվելով գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով: Միջհարկային ծածկի սալերի համատեղ աշխատանքն ապահովելու նպատակով անհրաժեշտ է հարակից սալերը կապել միմյանց հետ 30.0x30.0սմ եզրաչափերով միաձույլ երկաթբետոնե երիթներով /առօրե/:

Երիթները պետք է իրականացվեն սալերի երկայնական ուղղությամբ, ոչ պակաս քան երեք տեղամասերում (թռիչքում և մերձհենարանային հատվածամասերում):

2. Քանի որ մանկապարտեզի հիմնական մասնաշենքի լայնական պատերի միջև հեռավորությունը 8.8մ է, ինչը չի համապատասխանում ՀՀՇՆ 20.04 շիննորմերի 9 գլխի 126. կետի պահանջներին, ապա առաջարկվում է լայնական պատերի միջև իրականացնել լրացուցիչ քարաշարվածքային պատ կամ միաձույլ երկաթբետոնե շրջանակ, որը հուսալիորեն պետք է ամրակապվի երկայնական պատերի հետ: Նոր երկաթբետոնե շրջանակը կամ քարաշարվածքային պատը պետք է իրականացվի մասնաշենքի երկու վերգետնյա հարկերում՝ միևնույն ուղղածից ուղղությամբ: Նշենք, որ մասնաշենքի ներքին հատակագծային լուծումներին չխոչընդոտելու նպատակով, նպատակահարմար է իրականացնել միաձույլ երկաթբետոնե շրջանակ:
3. Մասնաշենքի լայնական և երկայնական պատերի հատման ճաքած հատվածամասերը ուժեղացնել՝ ներքին միակողմանի միաձույլ երկաթբետոնե շապիկով:
4. Վնասված միջնորմների վրա առկա ճաքերի համար հիմնական լուծում ստանալու համար անհրաժեշտ է ապամոնաժել միջնորմները և դրանց փոխարեն իրականացնել նորերը գործող (ՀՀՇՆ 20.04 - «Երկրաշարժադիմացկուն շինարարություն: Նախագծման նորմեր») նորմերի համապատասխան *1մինչև 3 հարկ բարձրությամբ երկաթբետոնե հիմնակմախքով և քարե կրող պատերով շենքերում, հանրակրթական նշանակության և նախադպրոցական հիմնարկությունների շենքերի միջնորմների իրականացման համար թույլատրվում է նաև թեթև նյութերից մանրաչափ շինվածքների կիրառություն (թեթև բետոնե և բջջային բլոկներ, գիպսե սալեր, բնական ծակոտկեն ապարներից բլոկներ):*

Մանրաչափ շինվածքներից միջնորմները պետք է ամրանավորել ամբողջ երկայնքով, ըստ բարձրության, ոչ ավելի, քան 600 մմ քայլով ամրանով՝ կարանում 0,3 սմ² ոչ պակաս ընդհանուր հատվածքով: Միջնորմները չպետք է մասնակցեն սեյսմիկ ուժերի ընկալմանը և դրա համար պետք է կրող տարրերին ամրացվեն ճկուն՝ շենքի երկու ուղղություններով ապահովելով դրանց կայունությունը շրջման դեպքում: Միջնորմների և շենքի կրող կոնստրուկցիաների (միջնորմների հաստության) ուղղությամբ անջատ-անջատ դեֆորմացումն ապահովելու համար պետք է.

- շենքի սյուների կամ պատերի միջև դասավորված միջնորմներում, ինչպես նաև շենքի հիմնակմախքին ամրացված միջնորմների կցորդման տեղերում իրականացնել ուղղաձիգ սեյսմիկ կարաններ, որոնց լայնությունը որոշվում է հաշվարկով և ընդունվում է, ըստ հաշվարկային բեռնվածքների շենքի հարկերի շեղվածքի առավելագույն արժեքի, բայց ոչ պակաս 20 մմ,

- միջնորմների վերին եզրի և ծածկերի տարրերի միջև իրականացնել,

հորիզոնական սեյսմիկ կարաններ ոչ պակաս 20մմ-ից և հաշվի առնել դրանց ծկվածքը բեռնվածքի տակ,

- ուղղաձիգ և հորիզոնական կարանները լցնել էլաստիկ նյութով:

5. Մասնաշենքում իրականացնել ներքին հարդարման աշխատանքներ, տեղադրել մետաղապլաստե պատուհաններ և դռներ այնտեղ, որտեղ որ դրանք փոխարինված չեն, իրականացնել հատակների նոր ծածկույթ, այնուհետև կատարել ներքին հարդարման աշխատանքներ:

6. Զանի որ մասնաշենքի աստիճանավանդակների հատավոր երկաթետոնե աստիճանները փաստացի ամրակցված չեն մետաղական թեքահեծանների հետ, ինչպես նախատեսված է ՀՀՇՆ 20.04 նորմերի 6 գլխի 101 կետով, ուստի պետք է այս թերությունը շտկել և աստիճանները ամրակցել մետաղական թեքահեծանների հետ: Իրականացնել նոր տարհանման աստիճաններ, անհրաժեշտության դեպքում 2-րդ հարկից երեխաներին տարհանելու համար:

7. Բարեկարգել մասնաշենքերի մերձակա տարածքը, իրականացնելով մակերեսային ջրահեռացման համակարգ:

8. Եթե մանկապարտեզի շինարարական աշխատանքներն կատարելու ժամանակ բացահայտվի լրացուցիչ միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտություն, որոնք ներկայացված չեն սույն եզրակացությունում, ապա դրանք պետք է լուծվեն աշխատանքային կարգով, նախագծում կատարելով համապատասխան լրացումներ կամ փոփոխություններ:

Բոլոր վերը նշված միջոցառումները պետք է իրագործվեն ընդունված կարգով
մշակված և հաստատված նախագծի համաձայն:

Շինարարական կոնստրուկցիաների և
սեյսմակայունության փորձագետ,
(ՀՀ քաղ. շին. նախարարության
լիցենզիա №16172), տ. գ. ք.



Ա. Պեպանյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՐԵՆՆԱԿԱՆ ԿԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

16172

ԲԱՐՍԵՆՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱԿԱՌՈՒ ՇԵՔԵՐԻ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՍԵՆՏՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ՓՈՋԱՆԻ
ՀԵՏԱԶՆՍՈՒԹՅՈՒՆ

(Գործունեության տեսակը)

Տրված է «30 ՀՈՒՆԻՍԻ 2015թ.» «ՍԵՅՍԱՍԱԿԱՅՈՒՆ ՇԻՆՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ի ԵՐԵՎԱՆ, ԱՂՈՆԻ 17/2-45

(Լիցենզիան տալու ամսաթիվը, որպես չափազանց անբարձրագույն անձի անվանումն ու օտնկերությանը, իսկ անուշադ ճեմարկանիտից հետո՝ ազգանունը, անունը ու բնակության վայրը)

ԱՆՇԱՄԿԵՏ

Գործողության ժամկետը _____

Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

(անուն, ազգանուն)



U.S.





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Լ Ի Ց Ե Ն Ձ Ի Ա Յ Ի Ն Ե Ր Դ Ի Ր

N 16172 - Մ

(լիցենզիայի և ներդիրի համարները)

«ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ԱՐՄԵՆ ՊԵՊԱՆՅԱՆ 000097980, ԱԳԱՊԻ ԲԱԲՅԱՆ AM 0329467, ԵՆԳԻԲԱՐ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ AN 0704800

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՆՆՈՒԹՅՈՒՆ

(գործունեության ոլորտը)

30.06.2015թ.

(տպյուև ամսաթիվը)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝

ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ՝



(ստորագրությունը)

Կ. Տ

Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

(անուն ազգանուն)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում